# ՓԱՍՏԵՐ. ԹՎԵՐ. ԴԵՊՔԵՐ...



Դյուրակիր ռադիոընդունիչներով այսօր արդեն ոչ-ոքի չես զարմացնի։ Բայց վերջերս ճապոնական մի ֆիրմայի կողմից վաճառքի հանված ռադիոընդունիչը, այնուամենայնիվ, զարմանք է պատճառում։ Այդ ընդունիչն աշխատեցնելու համար բավական է այն վերցնել ձեռքի մեջ։ Հատուկ սարքավորումը ձեռքի ջերմությունը փոխակերպում է էլեկտրական հոսանքի և ընդունիչից իսկույն ևեթ տարածվում են երաժշտական հնչյունները կամ լսվում է հաղորդավարի ձայնը։



Լոնդոնի քաղաքային իշխանությունների որոշմամբ գարնան գալուն պես մայրաքաղաքի այգիների և զբոսավայրերի հաճախորդներին արգելվում է միացնել դյուրատար ռադիոընդունիչները։ Արգելման պատճառն այն է, որ երաժշտական ռադիոհաղորդումները խլացնում են փետրավոր երգիչների ձայնը, որոնք Լոնդոնում անթիվ երկրպագուներ ունեն։



Ամենահիանալի ձկնապուրը «եփվում է» Հասարակածային Աֆրիկայում գտնվող Քիվի լճում, որի մակերևույթը 2650 կմ$^2$ է։ Այդ լճից ոչ հեռու գտնվող հրաբխի ժայթքման ժամանակ լճի ջուրը եռում է։ «Ձկան եփը» երբեմն շաբաթներ է տևում։ Երբ հրաբուխը դադարում է, տեղի բնակիչները եփված ձկները օգտագործում են իբրև կերակուր։

Վերջին անգամ այդպիսի ձկնապուր եփվել է 1948 թվականին։




Լոնդոնում փակվեց հարյուր տարեկանների ակումբը։ Ակումբի անդամները նպատակ էին դրել ապրել մինչև հարյուր տարի։ Սակայն նրանցից և ոչ մեկը չկարողացավ հասնել իր նպատակին։




Հարավսլավիայի Լյուպիանա քաղաքում կա մի ժամացույց, որն ահա արդեն 270 տարի աշխատում է անխափան։



digitised by A.R.A.R.@



Օվկիանոսում բնակվում է կենդանիների քսան միլիոն տեսակ։

***

Ամերիկայում գտնվող շվեյցարական տուրիստական բյուրոն իր շվեդ կոլեգաներին առաջարկել է համատեղ բացատրական աշխատանք տանել ամերիկացիների շրջանում հետևյալ լոզունգով. «Շվեդիան և Շվեյցարիան դա նույն բանը չէ»։ Այդպիսի ընկերության անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ ամերիկացիները ծանոթանալով շվեյցարական տուրիստական պրոսպեկտներին, հաճախ տոմսեր են գնում... Շվեդիա մեկնելու համար և ընդհակառակը։

***

Չափահաս մարդու օրգանիզմը բաղկացած է մոտավորապես 20 հազար միլիարդ բջջից։

***

Ներկայումս արտասահմանյան երկրներում հայերի թիվը հասնում է մեկուկես միլիոնի, այդ թվում 300 հազար՝ ԱՄՆ-ում, 150 հազար՝ Ֆրանսիայում, 200 հազար՝ Սիրիայում, 120 հազար՝ Լիբանանում, 40 հազար՝ Եգիպտոսում։

Մեծ թվով հայեր են ապրում Բուլղարիայում, Ռումինիայում, Արգենտինայում, Բրազիլիայում, Հունաստանում, Իրաքում, Իրանում, Թուրքիայում, Կանադայում, Եթովպիայում, Սուդանում, Հնդկաստանում և այլ երկրներում։




Կապույտ կետի նորածին ձագը կշռում է չափահաս փղից ավելի՝ մոտ 5 տոննա։

***

Ջախլիկները կազմում են երկրագնդի բնակչության մոտ երկու տոկոսը։ Հետաքրքրական է, որ նրանց թիվը ժամանակի ընթացքում երբեք չի փոփոխվում։



Սատուրնի օղակի լայնությունը 1 մ է։




Շախմատային խաղի բոլոր վարիանտների ընդհանուր թիվը $10^{140}$ է։



digitised by A.R.A.R.@